ԲՅՈՒԼԵՏԵՆ

Սեպտեմբեր 2025թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Սեպտեմբերին գումարվել է Պալատի խորհրդի 2 նիստ՝ 16.09.2025թ.-ին և 30.09.2025թ.-ին:

16.09.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 4 հարց: Նիստի ընթացքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի անդամակցության հանձնաժողովին անդամակցությունը դադարեցնելու, Պալատի անդամակցության հանձնաժողովի անհատական կազմը փոփոխելու, Պալատի խորհրդի կանոնակարգը հաստատելու մասին որոշումները:

30.09.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 4 հարց:
Նիստի ընթացքում հաստատվել են Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու,Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի խորհրդի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 38-Լ և 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 52-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ **17.09.2025թ.-ին և 25.09.2025թ**.-ին, որոնցում աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել 15 (տասնհինգ) անձի և հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ 09.09.2025թ.-ին և 29.09.2025թ.-ին, որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու 2 (երկու) ֆիզիկական անձանց՝ որպես աուդիտոր անդամ անդամակցությունը Պալատին:

Հաշվապահական հաշվառման հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ 09.09.2025թ.-ին և 17.09.2025թ.-ին, որոնցում քննարկել է մասնագիտական հարցեր:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

09.09.2025թ.-ին տեղի է ունեցել «ԱՄՍ 530 – աուդիտորական ընտրանք և ԱՄՍ 230 – Էականությունը աուդիտի պլանավորման և իրականացման գործընթացում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Աննա Չալյանը:**



11.09.2025թ.-ին տեղի է ունեցել «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Անուշ Միքայելյանը**:



15.09.2025թ.-ին տեղի է ունեցել «ՀՀ հարկային օրենսդրության սեպտեմբերի 1-ից ուժի մեջ մտած փոփոխությունները» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Սերգեյ Խաչատրյանը:**